ՊՐՈՖ. Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XIX դարի երկրորդ կեսին Հայաստանը թևակոխում է իր զարգացման կապիտալիստական փուլը։ Արտադրության կապիտալիստական եղանակը, ֆեոդալականի համեմատությամբ, առաջադիմական երևույթ էր, պատմական խոշոր նշանակություն ունեցող առաջընթաց մի քայլ հայ ժողովրդի կյանքում։

Ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում կապիտալիզմը միանդամից չզարդացավ։ Նրա տարրերը ֆեոդալական ֆորմացիայի ծոցում առաջացել էին տակավին միջնադարում։ XVII—XVIII դարերում նոր տեղաշարժեր կատարվեցին հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքում։ Տնտեսական կյանքի մասնակի վերելք տեղի ունեցավ. աշխուժացան արհեստն ու առևտուրը, ներքին և արտաքին փոխանակային կապերը։ Հայկական տպագրությունը և մամուլը մեծ դեր խաղացին հայ հասարակական մտքի, ազգային գիտակցության ու ազգային-ազատագրական շարժումների զարգացման գործում։

XVIII դարը հայ ժողովրդի պատմության մեջ մտավ որպես մահառման դար։ Հայաստանում և հայկական գաղթօջախներում հայ ժողովրդի ամենայայն զանգվածները մաքառում էին թուրք-պարսկական բռնակալության դաժան լծից ազատագրվելու, ազգային անկախություն ձեռք բերելու, հայկական կուլտուրան պահպանելու և զարգացնելու համար։ Դա մի ընդհանուր, կարելի է ասել, համաժողովրդական շարժում էր, ազգային գոյության ու հարատևության համար մղվող կենաց և մահու պայքար։

XVIII դարում հայ ժողովուրդը ծնեց իր մեծ զավակներին, Հայաստանի ազատության ու առաջադիմության գաղափարի ռահվիրաներ Իսրայել Օրուն, Հովսեփ Էմինին, Մովսես Բաղրամյանին, Շահամիր Շահամիրյանին և ուրիշներին։ Այդ դարում հանդես եկան մեծ զորավարներ Դավիթ բեկն ու Մխիթար սպարապետը, հայ ազատագրական մտքի նշանավոր հուշարձանները՝ «Նոր տետրակ որ կոչի հորդորակ»-ը, «Որոգայթ փառաց»-ը, «Նշավակ»-ը, Հայաստանի անկախության վերականգնման ծրագրերը և վերջապես մեր անդրանիկ պարբերականը՝ «Աղդարար»-ը։

Դարի երկրորդ կեսին, կղերա-ֆեոդալական տիրող ուղղության դեմ մղվող պայքարում ձևավորվեց հայ հասարակական մտքի մի նոր ուղղություն՝ բուրժուական-լուսավորական ուղղությունը։ Դա իր ժամանակի ամենաառաջավոր ուղղությունն էր։ Այդ հոսանքի ներկայացուցիչները ժողովրդին ազատության և առաջադիմության կոչ էին անում. «Մարդկությանը հատկացված բոլոր բարիքներից մեծագույնը ազատությունն է», — *ասում էին նրանք։ Մեծ դարաբաղցին՝ Մովսես Բաղրամյանը իր հայրենակիցներին հորդորում էր «արթնանալ ի վեհերոտեալ և ի հեղգացեալ թմրութիւնէ քնոյ ծուլութեան»,*

արիանալ, պայքարի երթել թշնամու դեմ, չխնայել կյանքը ազատության համար. համոզված լինելով, որ շուտով արև կծագի իր հայրենիքի վրա[1]։

XVIII դարի ազատագրական և լուսավորական շարժումը հայ հասարակական մտքի վերելքի արտահայտություն էր։ Դա խոր արմատներ արձակեց հայ կյանքում, գաղափարապես նախապատրաստեց հայ ժողովրդի պատմության մեջ XIX դարի սկզբին տեղի ունեցած վճռական շրջադարձը, հասարակական-քաղաքական և մտավոր զարգացման նոր ընթացքը, մեր նոր պատմության սկզբնավորումը։

XIX դարի առաջին կեսին ձևավորվեց Խ. Արովյանի գլխավորած հայրենասիրական, դեմոկրատական և լուսավորական ուղղությունը։ Դա օրգանապես կապված էր XVIII դարի առաջավոր մտքի հետ, սնվում էր նախորդների գաղափարական ակունքից։

Խ. Արովյանի, Մ. Թադիադյանի, Հ. Ալամդարյանի և նրանց համախոհների համար գլխավոր հարցը հայրենիքի ազատության ու առաջադիմության հարցն էր։ «Ապրել և մեռնել հայրենիքի համար, ահա այն խնդիրը, որ ես ընտրել եմ պատանեկան տարիներից ի վեր»,— ասում էր Խ. Արովյանը։ «Մեր արմատը մեր հայրենիքն ա, — ասում էր Մ. Թադիադյանը,— ուրեմն ով կսմի երջանիկ կալ, նախ պիտի իր հայրենյաց երջանկության միտ դնի»։

Խ. Արովյանն առաջինն էր, որ ամբողջ սրությամբ բարձրացրեց հայ ժողովրդի ազգային գիտակցության զարգացման, ազգային ինքնաճանաչման ու համախմբման հարցերը։ Նրա գլուխ-գործոցը՝ «Վերք Հայաստանի ողբ հայրենասիրի» պատմական վեպը, հայ ժողովրդի XIX դարի առաջին կեսի ոչ միայն գեղարվեստական խոսքի, այլև հասարակական մտքի ամենանշանավոր կոթողն է։ Դիպուկ է ասել Միքայել Նալբանդյանը՝ «Վերք Հայաստանի»-ի մեջ «մարմին է առել ազգի հոգին, ազգի սերկա վիճակը, ազգի հասկացողությունը»։

1830—1840-ական թվականներին Խ. Արովյանի գլխավորած դեմոկրատական-լուսավորական ուղղությունը 1850—1860-ական թվականներին թևակոխեց իր զարգացման նոր, ավելի բարձր էտապը՝ հեղափոխական-դեմոկրատական էտապը։

XIX դարի 50—60-ական թվականները բեկման կետ հանդիսացան հայ ժողովրդի կյանքում։ Իրենց դարն ապրած ֆեոդալական հարաբերությունները տեղի տվեցին կապիտալիստական հարաբերություններին։ Նոր փոփոխություններ, նոր տեղաշարժեր կատարվեցին երկրի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու կուլտուրական կյանքում։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ազատագրվեց արևելյան դեսպոտիզմի և ծայր աստիճան հետամնաց ֆեոդալական կարգերի կապանքներից ու բռնեց զարգացման նոր, ավելի բարձր ուղի։ Արևմտյան Հայաստանը մնալով, Կ. Մարքսի խոսքերով ասած, «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական ստադիայում» գտնվող Թուրքիայի լծի տակ, չկարողացավ ժամանակին անցնել կապիտալիզմի փուլը, մնաց սոցիալ-տնտեսական զար-

---

1 Տես Մ. Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչի Հորդորակ, Մադրաս, 1772։

դացման համեմատաբար ցածր մակարդակի վրա։ Առհասարակ հայ ժողովրդի բաժան-բաժան, մասնատված վիճակը, տարբեր և հակամարտ պետություն-ների տիրապետության տակ գտնվելը մեծ չարիք էր և իր կնիքն էր դնում մեր ժողովրդի երկու հատվածների տնտեսական-քաղաքական ու կուլտուրական կյանքի վրա։

Հաղթահարելով իր զարգացման ճանապարհին ընկած շատ արգելքներ ու դժվարություններ, հայ ժողովուրդը 1850—1860-ական թվականներին առաջընթաց խոշոր քայլ կատարեց և բռնեց ազգային վերածնության ուղին։ Հայ հասարակական-քաղաքական միտքը, հայկական կուլտուրան, գրակա-նությունը, գիտությունն ու արվեստը թևակոխեցին զարգացման նոր շրջան։ Աշխուժացավ հայ բուրժուական ազգի կազմավորման պրոցեսը, նոր թափ ու լայն ծավալ ստացան ազգային-ազատագրական և կուլտուր-լուսավորական շարժումները, սրվեցին դասակարգային հակամարտությունները, հասարա-կական-քաղաքական հոսանքների պայքարը։

1850—1860-ական թվականները հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ չափազանց բեղմնավոր, նշանավոր դեպքերով ու դեմքերով հարուստ մի ժամանակաշրջան էր։ Դա մի ժամանակաշրջան էր, որը ծնեց մեր ժողովրդի մեծ զավակներին՝ Մ. Նալբանդյանին, Ստ. Նազարյանին, Ստ. Ոս-կանին, Հ. Սվաճյանին, Մ. Մամուրյանին, Ն. Ռուսինյանին, Ս. Շահազիզին, Մ. Պեշիկթաշլյանին, Հ. Պարոնյանին, Պ. Դուրյանին, Բաֆֆուն, Ռ. Պատ-կանյանին, Գ. Սունդուկյանին և ուրիշների։ 1850—1860-ական թվականները Խ. Աբովյանի ու Սայաթ-Նովայի անմահ երկերի, «Հյուսիսափայլ»-ի ու «Մե-ղու»-ի, «Արևելք»-ի ու «Արևմուտք»-ի հրատարակության հիշարժան թվական-ներն են։

1850—1860-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական մտքի երեք հիմնական ուղղություն գոյություն ուներ, որն արտահայտում էր երեք հիմնական դասակարգերի՝ ֆեոդալական վերնախավի, բուրժուազիայի և գյուղացիության շահերն ու ձգտումները։

1. Կղերա-ֆեոդալական հոսանք։ Ֆեոդալական ֆորմացիայում այդ հո-սանքը ամենաազդեցիկ, տիրող հոսանքն էր, որը շարունակում էր իր գոյու-թյունը նաև կապիտալիստական ֆորմացիայում։ Այդ հոսանքն արտահայտում էր կղերական, ֆեոդալական, աղայական շահագործող խավերի շահերը։ Դա հայ հասարակական մտքի ամենառեակցիոն ուղղությունն էր, ֆեոդալական, միապետական կարգերի պաշտպան, կյանքի հին, իր դարն ապրած ձևերի, կրո-նական դոգմաների ջատագով։

Կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչները եկեղեցին համարում էին ազգի գոյության միակ հենարանը, կրոնն ու գրաբար լեզուն՝ ազգության սյուները, դպրոցը՝ եկեղեցու դավիթը։ Նրանք դեմ էին հայ ժողովրդի ազգա-յին-ազատագրական պայքարին, նրա լուսավորությանն ու առաջադիմությա-նը, աշխարհաբար լեզվին ու աշխարհիկ կրթությանը։ Այդ ուղղության պարա-գլուխներն էին արևելահայերի մոտ՝ Գաբրիել վարդապետ Այվազովսկին, իսկ արևմտահայերի մոտ՝ Հովհաննես Զամուռճյանը (Տերոենց)։ Նրանք ունեին իրենց բազմաթիվ համախոհներն ու հետևորդները. Ռեակցիոն ուղղության թերթերից էին՝ «Երևակ»-ը, «Մասյաց Ադավնի»-ն, «Ճոռաքաղ»-ը և այլն։

Կղերա-ֆեոդալական հոսանքը, ինչպես և մյուս հոսանքները, միատարր ու միաձույլ չէր։ Թե արևելահայ և թե արևմտահայ հասարակական այդ հիմնական հոսանքների ներսում տարբեր ժամանակներում, տարբեր հարցերի նկատմամբ երևան են եկել տարբեր տեսակետներ, արմատական և չափավոր հայացքներ։ Հասարակական-քաղաքական հիմնական հոսանքների հետ միաժամանակ գոյություն են ունեցել միջանկյալ ուղղություններ։ Այսպես, օրինակ. 1860—1863 թվականներին Թիֆլիսում հրատարակվող «Կոունկ հայոց աշխարհի» հանգեսը և նրա խմբագիր Մարկոս Աղաբեկյանը պաշտպանում էին կիսակղերական, կիսալիբերալ հայացքներ։ «Հյուսիսափայլ»-ի, Կ. Պոլսի «Մեղու»-ի, Զմյուռնիայի «Ծաղիկ»-ի շուրջը համախմբված գործիչներից բոլորը չէ, որ «գտարյուն», հետևողական դեմոկրատներ էին կամ լիբերալներ։ Նույնը կարելի է ասել նաև հետագա ժամանակների հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու գործիչների մասին։ Մի բան անվիճելի է, որ հասարակական հիմնական դասակարգերից դուրս, նրանցից անկախ չեն եղել և չէրն կարող լինել հասարակական-քաղաքական հիմնական հոսանքներ։

2. Լիբերալ-բուրժուական հոսանք։ Այս հոսանքը ծնվեց ֆեոդալիզմի դեմ բուրժուազիայի մղած պայքարում, կապիտալիզմի զարգացման, բուրժուազիայի տնտեսական, քաղաքական և գաղափարական դիրքերի հաստատման ու ամրապնդման շրջանում։

Լիբերալ-բուրժուական հոսանքը արտահայտում էր նոր զարգացող բուրժուազիայի շահերը, պայքարում էր ֆեոդալական, միապետական հետամնաց կարգերի դեմ և ձգտում հաստատել բուրժուական կարգեր։ «Լիբերալները եղել են և մնում են բուրժուազիայի գաղափարախոսներ»[2], — ասում է Վ. Ի. Լենինը։

Բուրժուական լիբերալները ձգտում էին ֆեոդալական հին կարգերը փոխել խաղաղ ճանապարհով, ռեֆորմների միջոցով։ Նրանք դեմ էին հեղափոխական պայքարին, ժողովրդական, մասսայական շարժումներին, ներքևից եկող ազատությանը։

Լիբերալները հանդես եկան կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ հայ հասարակական կյանքի եվրոպականացման-բուրժուականացման նշանաբանով, ազգային կրթության, լուսավորության, լեզվի, գրականության ու արվեստի զարգացման համար։ Եվ այնքանով, որքանով ֆեոդալիզմի համեմատությամբ կապիտալիզմը մի խոշոր առաջընթաց քայլ էր, այդքանով էլ, կղերա-պահպանողականների համեմատությամբ, լիբերալ-բուրժուական հոսանքը առաջադիմական էր։

Լիբերալ-բուրժուական ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Ստեփանոս Նազարյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ։ Ստ. Նազարյանը հայ լուսավորական շարժման խոշոր դեմքերից մեկն էր, մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մտերիմ ընկերը։ Նա Դորպատի համալսարանի շրջանավարտ էր, արևելագիտության առաջին հայ դոկտորը, Կազանի համալսարանի և Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, իր ժամանակի կրթված մարդկանցից մեկը։ Մեծ է եղել Ստ. Նազարյանի դերը հայ հասարակական մտքի, հայոց լեզվի, գրականության, գիտության ու արվեստի զարգացման գործում։ 1858 թվականին Մոսկվայում, Մ. Նալբանդյանի հետ միա-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 133։

սին, նա հիմք դրեց իր ժամանակի ամենաառաջադիմական ամսագրին՝ «Հյուսիսափայլ»-ին, որի առաջին էջի վրա դրոշմված էին հետևյալ նշանավոր խոսքերը. «Այսուհետև ոչինչ Եգիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել պիտության միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտո էր փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մէջ։ Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերությունից»[3]։

Ազգային կրթության ու լուսավորության, աշխարհաբար լեզվի, գրականության, թատրոնի և մի շարք այլ հարցերում Ստ. Նազարյանը կանգնած էր առաջադիմական դիրքերում և Մ. Նալբանդյանի հետ միասին գլխավորում էր կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ մղվող պայքարը։ Չնայած իր լիբերալ հայացքներին, Ստ. Նազարյանը հանդիսանում է 1840—1860-ական թվականների լուսավորական շարժման ջահակիրներից մեկը։

Արևմտահայ իրականության մեջ բուրժուական լիբերալիզմի գաղափարների տարածման, աշխարհաբար լեզվի, ազգային կրթության ու դաստիարակության զարգացման ասպարեզում առանձնապես մեծ դեր խաղացին Ն. Զորայանը, Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Սերվիչեն և ուրիշներ։

3. Հեղափոխական-դեմոկրատական հոսանք։ 1850—1860-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի ամենաարմատական, ամենաառաջավոր ուղղությունը հեղափոխական-դեմոկրատական ուղղությունն էր։ Եթե կղերա-ֆեոդալական և լիբերալ բուրժուական հոսանքներն արտահայտում են շահագործող դասակարգերի շահերը, ապա հեղափոխական-դեմոկրատները հանդիսանում էին շահագործվողների՝ գյուղացիների, արհեստավորների, դեմոկրատական լայն խավերի շահերի պաշտպաններ։

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը հայ իրականության մեջ հանդես եկավ XIX դարի կեսերին, ներքին և արտաքին հարստահարողների դեմ աշխատավորական մասսաների մղած սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի պայմաններում։ Ցարիզմի և սուլթանիզմի դեմ մղվող արևելահայ և արևմտահայ գյուղացիական ապստամբություններն ու ազգային-ազատագրական շարժումները մի կողմից, ռուսական և համաեվրոպական հեղափոխական շարժումները, մյուս կողմից, սնում ու լիցք էին տալիս հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքին։

XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական մտքի ամենախոշոր դեմքը, հեղափոխական-դեմոկրատական հոսանքի պարագլուխը Միրայել Նալբանդյանն էր։ Նա առաջինն էր, որ իր ամբողջ խորությամբ ըմբռնեց հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության գաղափարը և անվեհեր կերպով պայքարի ելավ այդ վեհ գաղափարի կենսագործման համար։

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և զրիչը չնվիրեցինք հարուստներին... Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ ահսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև գենոով և արյունով, երբ մի օր արժանի լինինք գենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ բարոզած ազատությունը նվիրել և

3 «Հյուսիսափայլ», 1858, № 1։

սրել մեր աչյունով։ Անավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»[4]։

Մ. Նալբանդյանը ժողովրդին պայքարի էր կոչում բռնակալության դեմ, պաշտպանում էր ազգերի իրավահավասարության սկզբունքը։ «Մենք թշնամի ենք բռնակալության, ուր կամ ինչ կերպով որ հայտնվի»—գրում է նա։ «Մենք ուրախ չենք, որ մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը։ Հերիք է ասում ենք, որ մի ազգություն յուր մի շամփուր խորոված ի համար մորթում է մյուս ազգության եզը»[5]։

Մ. Նալբանդյանը պայքարում էր ժողովրդի ոչ միայն ազգային, այլև սոցիալական ազատագրության համար։ Տնտեսական խնդիրը նա համարում է կյանքի և մահու խնդիր։ «Եթե ազգության ներքին ու էական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը,—գրում է նա,—անհիմն է այդ ազգությունը, սուտ է այդ ազգությունը և նա կկործանվի... Դու հազար տարի քարոզէ ինձ քո վերացական ազգությունը, ես միշտ չպիտի հասկնամ»[6]։ Մի այլ տեղ նա գրում է. «Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն»[7]։

Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը դրեց հեղափոխական-դեմոկրատական ուղու վրա, կապելով այդ ռուսական և համաեվրոպական հեղափոխական շարժման հաղթանակի հետ։ Այս ամենից հետո, ցավալի է, երբ մեր գրականության մեջ տեղ են գտնում այնպիսի հնացած տեսակետներ, որոնք մեծ հեղափոխական-դեմոկրատին փաստորեն դարձնում են ռեֆորմիստ։

Մ. Նալբանդյանը հայ հեղափոխական-դեմոկրատական ուղղության ամենակարկառուն դեմքն էր, բայց նա մենակ չէր. ինչպես արևելահայերի, այնպես էլ արևմտահայերի մեջ նա ուներ իր զինակիցներն ու հետևորդները։ Արևմտահայ հեղափոխական-դեմոկրատիայի տրիբունը՝ «Մեղու» թերթի խմբագիր Հարություն Սվաճյանն էր։ Մ. Նալբանդյանի գաղափարակիցներից ու համակրողներից էին նաև բռնաշունչ հրապարակախոս Մաթևոս Մամուրյանը, Սերորբ Թագվորյանը, Արմենակ Հայկունին և ուրիշներ։

1850—1860-ական թվականների հեղափոխական-դեմոկրատական և լուսավորական շարժումը հայ ժողովրդի քաղաքական և գաղափարական հասունության արտահայտությունն էր։ Դա օրգանապես կապված էր մեր ազգային-ազատագրական շարժումների վերելքի, ազգային-կուլտուրական վերածնության հետ։ Դա, իր առանձնահատկություններով հանդերձ, մի ընդհանուր համազգային պրոցես էր և ճիշտ չէ, երբ արհեստականորեն բաժանում, իրարից կտրում-անջատում են, երբեմն էլ իրար հակադրում, նույն արմատի վրա աճած ճյուղերը, արևմտահայ և արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, ազգային-ազատագրական շարժումները, կուլտուրան, դրականությունը, գիտությունն ու արվեստը։

---

4 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, 1940, Երևան, էջ 23—24։
5 Նույն տեղում, էջ 81—82։
6 Նույն տեղում, էջ 91։
7 Նույն տեղում, էջ 61։

XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի շերտավորումներն ու պայքարը նշված երեք հոսանքներով չէր սպառվում։ Հիմնական այդ հոսանքների կողքին կային նաև միջանկյալ ուղղություններ, սոցիալական միջանկյալ շերտերի գաղափարախոսներ, որոնք, սակայն, վճռական դեր չէին կատարում և չէին էլ կարող կատարել։

Կղերա-ֆեոդալական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքների պայքարը շարունակվեց նաև հետագա շրջանում, իր վրա կրելով սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած նոր փոփոխությունների կնիքը։ Այդ հոսանքներից ամեն մեկը յուրատեսակ էվոլյուցիա ապրեց, հարմարվելով նոր միջավայրին, ունկնդրելով իրենց թիկունքում կանգնած հասարակական դասակարգերի նոր պահանջներին։

Կղերա-ֆեոդալական հոսանքը 1850—1860-ական թվականներին ջախջախիչ հարվածներ ստացավ լուսավորիչներից և հատկապես հեղափոխական-դեմոկրատներից, այնուհետև կապիտալիզմի զարգացման հետևանքով աստիճանաբար թուլացավ և կորցրեց իր երբեմնի ազդեցիկ դիրքերը։ 1870—1880-ական թվականներին այդ ուղղության դերը փաստորեն իրենց վրա վերցրին «Մեղու Հայաստանի» (խմբագիր Պ. Սիմոնյան) և «Նոր Դար» (խմբագիր Սպ. Սպանդարյան) թերթերի շուրջն համախմբված պահպանողականները։ Ճիշտ չէր լինի, իհարկե, Պ. Սիմոնյանին և Սպ. Սպանդարյանին նույնացնել Գ. Այվազովսկու կամ Հ. Ջամուռճյանի հետ։ Նրանց հայացքների մեջ եղած ընդհանուր գծերի հետ մեկտեղ, կային նաև էական տարբերություններ։ Սակայն փաստը մնում է փաստ, որ պահպանողականները, ծվարած եկեղեցու և հոգևորականության շուրջը, պայքարում էին առաջադիմական ուժերի դեմ, բացասական դիրք էին բռնել ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների նկատմամբ, սխալ կողմնորոշում ունեին արտաքին քաղաքական հարցերում և այլն։ Կղերա-պահպանողական ուղղությունը մնում էր որպես հայ կյանքի ամենահետադիմական ուղղությունը։

Լիբերալ-բուրժուական հոսանքը կապիտալիզմի զարգացման շնորհիվ հետզհետե ամրապնդեց իր դիրքերը։ Այդ ուղղության կենտրոնական օրգանն էր «Մշակ»-ը, որը լույս էր տեսնում Թիֆլիսում 1872 թվականի հունվարից, Գրիգոր Արծրունու խմբագրությամբ։

Գր. Արծրունին տաղանդավոր հրապարակախոս էր, ժամանակի աչքի ընկնող հասարակական-քաղաքական գործիչներից մեկը։ Նա շարունակում էր Ստ. Նազարյանի և «Հյուսիսափայլ»-ի գիծը ազգային լուսավորության, լեզվի և կուլտուրայի հարցերում։ Գր. Արծրունին և նրա «Մշակ»-ը պայքարում էին «Մեղու Հայաստանի» և «Նոր դար»-ի պահպանողական, հետադիմական հայացքների դեմ։ Պատահական չէ, որ ժողովրդի մեջ մշակականները ճանաչված էին որպես առաջադիմականներ, իսկ մեղվականներն ու նորդարականները՝ հետադիմականներ։

Ժամանակի այրող հարցերում՝ հայ ազատագրական շարժումների և հայկական հարցում, մշակականներն ու պահպանողականները կանգնած էին տարբեր դիրքերում։ «Մշակ»-ը և Գր. Արծրունին ազատագրական ակտիվ պայքարի կողմնակիցներ էին։ Ինչպես ցույց են տալիս նորահայտ փաստերը, Գր. Արծրունին, լեգալ և անլեգալ կերպով, գաղափարական, բարոյական և նյութական օգնություն ու օժանդակություն էր ցույց տալիս արևելահայ և արև-

մրտահայ ազատագրական շարժման գործիչներին, սերտ կապեր ուներ ազատագրական գաղտնի խմբակների և նրանց ղեկավարների հետ։

Հայկական հարցում Գր. Արծրունին և «Մշակ»-ը պաշտպանում էին այն տեսակետը, որ հայերը, Բալկանյան ժողովուրդների նման, պետք է ապրստամբվեն, զենքի դիմեն և Ռուսաստանի օգնությամբ ազատագրվեն թուրքական բռնակալության լծից։ Արևմտահայերի ազատագրության այս տեսակետի վրա էին կանգնած նաև ազգային-դեմոկրատական հայացքներ ունեցող մեր ականավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Բաֆֆին և ուրիշներ։

Արծրունին, Պատկանյանը, Բաֆֆին քննադատում էին արևմտաեվրոպական մեծ տերությունների, հատկապես Անգլիայի ու Գերմանիայի նենգ ու խարդախ քաղաքականությունը հայերի նկատմամբ, հայկական հարցի լուծումը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։ Գր. Արծրունին արտահայտելով հայ ժողովրդի ճնշող մեծամասնության մեջ տիրող կարծիքը, հանդես էր գալիս որպես ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան։ Զարմանալի չէ, որ գերմանական պաշտոնական ստորաբաշ թերթերը, Գր. Արծրունուն պրովոկացիայի ենթարկելու նպատակով, հայտարարեցին «ռուսական լրտես»։

Արևմտահայերի ազատագրության և ռուսական օրիենտացիայի հարցերում «Մշակ»-ին հակառակ դիրքերի վրա էին կանգնած ազգային պահպանողականները։ Նրանք դեմ էին Գր. Արծրունու, Բաֆֆու, Պատկանյանի ապստամբական կոչերին, ակտիվ պայքարի գործողություններին, ռուսական օրիեստացիային և այլն։

Անտեսելով պատմական այս փաստերը, որոշ հեղինակներ այն տեսակետն են պաշտպանել, թե հայ ազատագրական շարժման մեջ սկզբից ենթադրություն է ունեցել երկու օրիենտացիա՝ բուրժուազիան հարել է արևմտաեվրոպական, իսկ դեմոկրատիան՝ ռուսական օրիենտացիային։ Դա, իհարկե, պատմական մոտեցում չէ։ Գր. Արծրունին հայ լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսն էր, բայց ռուսական օրիենտացիա ուներ։ Արևելահայ բուրժուազիան, որն իր տնտեսական շահերով կապված էր Ռուսաստանի հետ, ռուսական օրիենտացիա ուներ և ոչ թե արևմտաեվրոպական։ Դրությունը փոխվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։

Ի՞նչ ընթացք ունեցավ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը։ Մ. Նալբանդյանի մահվանից հետո այդ հոսանքի գործունեությունը զգալիորեն թուլացավ։ Ցարական և սուլթանական բռնապետական կարգերում հեղափոխական-դեմոկրատները զուրկ էին ազատ գործելու հնարավորությունից։ Ծանր էր նրանց աշխատանքի ու պայքարի պայմանները, զորեղ էին նրանց ներքին և արտաքին թշնամիները։ Մ. Նալբանդյանի կորուստը մեծ եղավ ամբողջ ժողովրդի և հատկապես հեղափոխական-դեմոկրատական հոսանքի հետագա գործունեության համար։ Մ. Նալբանդյանից հետո հանդես չեկավ նրա նման մարտնչող հեղափոխական։ Նա մնաց մինչմարքսիստական հայ հասարակական-քաղաքական մտքի ամենախոշոր դեմքը։

Հարկավ, այս չի նշանակում, թե Մ. Նալբանդյանից հետո դադարեց հեղափոխական միտքը, Նալբանդյանի հետ գերեզման իջան նաև նրա գործն ու գաղափարները։ Մ. Նալբանդյանը ծնվեց ժողովորդի ծոցից, դարձավ ժողովրդի իղձերի ու ցանկությունների լավագույն արտահայտիչը, նրա ազատագրական պայքարի ոգեշնչողն ու ղեկավարը։ Մեծ դեմոկրատի ազատասիրա-

կան ու հայրենասիրական գործն ու գաղափարները իոր արմատներ գցեցին ժողովրդի մեջ, սերունդներ դաստիարակվեցին նրա գործի ու գաղափարների վրա։

Մ. Նալբանդյանն ունեցավ իր հետևորդները։ Նրա ցանած սերմերը շուտով սկսեցին ծիլեր արձակել։ Հայ ժողովուրդը միշտ վառ պահեց ազատության երգչի ու մարտիկի պայծառ հիշատակը։ Մ. Նալբանդյանի հայրենասիրական ու ազատասիրական գաղափարները մուտք գործեցին Հայաստանի գյուղերն ու քաղաքները, ոտքի հանեցին դեմոկրատական լայն խավերին։ Գերազանցապես Մ. Նալբանդյանի ու նրա զինակիցների, հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ազդեցության տակ է, որ Հայաստանում հանդես եկան հայրենասիրական-ազատագրական գաղտնի խմբակները և ոչ թե լիբերալ հոսանքի, ինչպես այդ հրամցնում են բուրժուազիայի ապոլոգետները։

Մեծ է եղել Մ. Նալբանդյանի բարերար ազդեցությունը ինչպես 1850—1860-ական թվականների, այնպես էլ հետագա ժամանակների հայ հասարակական մտքի, ազգային-ազատագրական շարժումների, աշխատավորական մասսաների սոցիալ-դասակարգային պայքարի վրա։

Գրականության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքին հաջորդել է ազգային-նարոդնիկական ուղղությունը, իսկ Մ. Նալբանդյանին՝ նարոդնիկները։ Գտնվեցին մարդիկ, որոնք նույնիսկ Նալբանդյանին համարեցին նարոդնիկ, «նարոդնիկական շարժման հիմնադիրը Հայաստանում»։ Այդպես մտածողները հայ հասարակական մտքի պատմությունից ջնջում են հեղափոխական-դեմոկրատական ուղղությունը և փոխարենը դնում նարոդնիկությունը։

Նարոդնիկությունը, որը հսկայական դեր խաղաց ռուսական իրականության մեջ, չնույնացվեց հեղափոխական-դեմոկրատական հոսանքի հետ։ Ռուսական հասարակական մտքի պատմության մեջ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը իր տեղն ունի, նարոդնիկությունը՝ իր տեղը. դրանք երբեք չեն նույնացվում և չի էլ կարելի նույնացնել։ Առավել ևս հայ հասարակական մտքի պատմության մեջ չի կարելի հեղափոխական-դեմոկրատական ուղղությունը փոխարինել նարոդնիկական ուղղությամբ։

Ճիշտ չէ նաև այն տեսակետը, թե հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքին հաջորդել է նարոդնիկական հոսանքը և 1870—1880-ական թվականներին եղել է տիրող ուղղություն։

Նարոդնիկությունը ռուսական երևույթ էր, ռուսական հասարակական-քաղաքական կյանքի որոշակի ժամանակաշրջանի արտահայտություն։ Հայաստանն Ռուսաստան չէր. հայ ժողովրդին հուզող հարցերն էլ տարբեր էին։ XIX դարի երկրորդ կեսին հայ հասարակական միտքը կրծող հարցերը՝ ազգային-ազատագրական պայքարը, հայկական հարցը, սուլթանական և ցարական բռնակալության լծից հայ ժողովրդի ազատագրության, Հայաստանի վերամիավորման և բազմաթիվ այլ հարցեր, նարոդնիկության համար բնորոշ հարցեր չէին։ Պատահական չէ, որ Հայաստանում նարոդնիկական կազմակերպություններ չեն եղել։ Բայց, եղել են առանձին անհատներ, գերազանցապես Ռուսաստանում սովորող և ռուսական կրթություն ստացած հայ երիտասարդներ, որոնք հարել են նարոդնիկությանը, մասնակցել Ռուսաստանում և Անգրկով-

կասում գործող նարոդնիկական գաղտնի խմբակների աշխատանքներին, ոմանք նույնիսկ աչքի ընկնող դեր կատարել։

Ռուսական նարոդնիկությունը, անկասկած, որոշակի ազդեցություն է ունեցել արևելահայ հասարակական-քաղաքական մտքի վրա։ Բայց, այդ չի նշանակում, թե նա եղել է հայ հասարակական մտքի տիրող ուղղություն, երբ Հայաստանի և հայ ժողովրդի մեծ մասում՝ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում նարոդնիկությունը ոչ մի դեր չի կատարել։ Չի կարելի մեխանիկորեն ռուսական նարոդնիկությունը տեղադրել Հայաստանում և նարոդնիկի յուրիկ փակցնել Մ. Նալբանդյանի ու մյուս ազգային հեղափոխական գործիչների վրա։ Բոլոր դեպքերում պետք է հարցին կոնկրետ պատմական մոտեցում ունենալ և իրերն իրենց անունով կոչել։

Մենք այն կարծիքին ենք, որ XIX դարի 70—80-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական մտքի տիրող ուղղությունը եղել է ոչ թե ռուսական նարոդնիկությունը, այլ հայ ազգային-դեմոկրատական ուղղությունը։ Աշխատավորական, դեմոկրատական լայն խավերի շահերի արտահայտիչները Հայաստանում հանդիսանում էին ազգային-դեմոկրատները։ Նրանք այս ու այն չափով հանդես էին գալիս նաև որպես Մ. Նալբանդյանի գործի ու գաղափարների շարունակողներ ու պաշտպաններ։ Ազգային-դեմոկրատները ժողովրդի ճնշող մեծամասնությունը կազմող մանր արտադրողների՝ գյուղացիների, արհեստավորների և մյուս խավերի գաղափարախոսներն էին։

Ազգային-դեմոկրատական ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Բաֆֆին, Ռ. Պատկանյանը, Հ. Պարոնյանը, Մ. Մամուրյանը, Ծերենցը, Ղ. Աղայանը, Ա. Արփիարյանը, Ա. Թոխմախյանը, 1869 թվականին Ալեքսանդրապոլում, 1872 թ. Վանում, 1881 թ. Կարինում, 1882 թ. Մոսկվայում հիմնված ազատագրական գաղտնի խմբակների ղեկավարները և ուրիշներ։

Ազգային-դեմոկրատներն, իհարկե, հեղափոխական-դեմոկրատներ չէին. բայց նրանք լիբերալներ էլ չէին։ Նրանց համար խորթ էր բուրժուական լիբերալիզմը, առանձնապես նրա բնորոշ գծերից մեկը՝ նացիոնալիզմը։ Ազգային-դեմոկրատները պայքարում էին ռեակցիոներների և պահպանողականների դեմ, ցարիզմի ու սուլթանիզմի դեմ՝ հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության համար։ Բուրժուական-լիբերալների և ազգային-դեմոկրատների միջև այս և բազմաթիվ այլ հարցերում մեծ տարբերություններ կային։

Ուստի ճիշտ չեն բոլոր նրանք, ովքեր նույնացնում են այդ երկու տարբեր հոսանքները և դրանով իսկ մեր ժողովրդի լավագույն գործիչներից ու գրողներից շատերին կապում բուրժուական լիբերալիզմի հետ։ Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ մեր ականավոր գրողներից և ազատագրական շարժման նշանավոր գաղափարախոսներից ոմանց (Բաֆֆի, Պատկանյան և ուրիշներ) եռահարկ ու քառահարկ պիտակներ են կպցվել— «ազգային պահպանողական», «բուրժուական-լիբերալ», «ազգային-ռեֆորմիստ», «հակահեղափոխական նացիոնալիստ» և այլն։

Ուսումնասիրողներից ոմանք էլ ընկել են հակառակ ծայրահեղության մեջ. մեր մի շարք նշանավոր գրողների ու գործիչների (Բաֆֆի, Պարոնյան, Սամուրյան և ուրիշներ) համարել են հեղափոխական-դեմոկրատներ։

Բաֆֆին XIX դարի երկրորդ կեսի մեր գրականության ամենախոշոր դեմքն է, հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության ջերմ պաշտպան։

Րաֆֆու կյանքի ու գործունեության, գրական մեծ վաստակի բազմակողմանի գիտական վերլուծությունը մեզ հիմք չի տալիս նրան դասելու ոչ հեղափոխական-դեմոկրատների և ոչ էլ մանավանդ բուրժուական լիբերալների շարքը։

Մաթևոս Մամուրյանը XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ նշանավոր մտածողներից է։ 1870—1880-ական թվականներին նա անողոք քննադատության էր ենթարկում ռեակցիոն Հ. Ջամուռճյանին, հայ ամիրաներին ու կղերականներին։ «Այս հրեշներն արդարության և իրավանց նշույլ անգամ չունեն,— գրում է Մամուրյանը,— թաղել են ազգային շահն ու ապագան իրենց կրից մեջ... անդադար կծծեն ողորմելի ժողովրդի արյունը»։ Խոսելով գյուղացիների ճնշման մասին նա գրում է. «Հայ գյուղացին կհարստահարի ներսեն ու դրսեն, կհեծեծե, կլա, բայց որմէ խնդրէ արդարությունը»։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրության և մի շարք այլ հարցերում Մ. Մամուրյանը պաշտպանում էր արմատական դեմոկրատական տեսակետներ, բարձր էր գնահատում Մ. Նալբանդյանին՝ անվանելով նրան «մեծ մարդ», «ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործոն իմաստասեր» և այլն։ Սակայն, իր ամբողջության մեջ վերցրած, իր հիմնական գործով ու գաղափարներով Մ. Մամուրյանը, ինչպես և Րաֆֆին ու Պարոնյանը, հեղափոխական-դեմոկրատներ չէին, նրանց դեմոկրատիզմը չհասավ Մ. Նալբանդյանի և նույնիսկ Հ. Սվաճյանի հեղափոխական-դեմոկրատիզմին։

Այսպիսով, մենք մեղանչած կլինենք պատմական ճշմարտության առաջ, եթե Րաֆֆուն, Պատկանյանին, Պարոնյանին, Մամուրյանին, Պեշիկթաշլյանին, Ծերենցին, Աղայանին, Արփիարյանին և մյուս դեմոկրատ գրողներին ու գործիչներին համարենք հեղափոխական-դեմոկրատներ կամ բուրժուական-լիբերալներ։

1870—1880-ական թվականների մեր բոլոր առաջավոր գրողներն ու հասարակական-քաղաքական գործիչները, որոնք հանդես էին գալիս աշխատավոր ժողովրդի, դեմոկրատական լայն խավերի ազգային շահերի պաշտպանությամբ, պատկանում էին ազգային-դեմոկրատական ուղղությանը։ Այդ էր ժամանակի տիրող ուղղությունը։

Հարկ է նկատել, որ ինչպես հայ հասարակական մտքի մյուս հոսանքների, այնպես էլ ազգային-դեմոկրատների մեջ եղել են արմատական և չափավոր, հետևողական և անհետևողական տարրեր։ Մեր խոսքը գլխավոր ուղղության, տիրապետող հայացքների մասին է։

1880—1890-ական թվականներին հայ իրականության մեջ հանդես են գալիս քաղաքական կուսակցությունները։ Առաջին քիչ թե շատ կազմակերպված կուսակցությունը՝ 1885 թվականին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնված արմենականների կուսակցությունն էր։ Արմենական կուսակցության հիմնադիրը արևմտահայ աշքի ընկնող մտավորական, «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանն էր, իսկ Վանի ամենաուժեղ կազմակերպության հիմնադիրը՝ Մկրտիչ Ավետիսյանը։ «Արմենիա»-ն կուսակցության գլխավոր օրգանն էր և ուներ հայրենասիրական, ազատասիրական ուղղություն։

«Արմենիա»-ի և արմենականների գլխավոր նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրությունն էր թուրքական բռնակալության ծանր լծից։ 1886 թ. խոսելով հայ ժողովրդի ներքին և արտաքին կեղեքիչների մասին, Մ. Փորթուգալյանը գրում է. «Քաղաքական ստրկությունը, ապահովության բա-

ցակայությունը, տնտեսական անստույգ և միշտ աղետաբեր վիճակը, հարբստահարող և ճնշող ձեռքեր, որոնք թե ներսեն և թե գրսեն ծանրացած են մեր խեղճ ազգի գլխին վրա, անտանելի դժոխային վիճակ ստեղծած են մեր հայրենիքի մեջ»։

Արմենականներն ունեին իրենց ծրագիրը, որը կոչվում էր «Վարդապետական Հայաստանի ազատության»։ Դա տակավին հեղհեղուկ ծրագիր էր, որի վրա նկատելի էր բուրժուական և անգամ կղերական հայացքների ազդեցությունը։ Սակայն, հիմնականում դա ազգային-դեմոկրատական, ազատագրական բովանդակություն ուներ։

Հայ ժողովրդի և հատկապես արևմտահայության ազատագրական պայքարի պատմության մեջ արմենականները աչքի ընկնող, դրական դեր խաղացին։ Բայց նրանք չկարողացան մասսայական կուռ կազմակերպություն ստեղծել և ճիշտ ուղիներ նշել հայ ազատագրական շարժման համար։

1887 թ. Ժնևում (Շվեյցարիա) մի խումբ կովկասահայ ուսանողներ հիմք են դնում հնչակյան կուսակցությանը։ Նրանք հրատարակում էին «Հնչակ» թերթը, որի անունով էլ կոչվեց կուսակցությունը։ Հնչակյան կուսակցության հիմնադիրներն էին Ավետիս և Մարո Նազարբեկյանները, Ռուբեն Խանազատը և ուրիշներ։ 1887 թ. կազմվում և 1888 թ. հրատարակվում է հնչակյանների ծրագիրը։ Այդտեղ շարադրված են հնչակյան կուսակցության հիմնական սկզբունքները, նրա մոտակա և հեռավոր նպատակները։

Հնչակյաններն իրենց մոտակա խնդիրը համարում էին Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական լծից, «ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատություն և ազգային անկախություն» ստեղծելը։ Իրենց հեռավոր նպատակը, իրենց իդեալը նրանք համարում էին փոքրամասնության կողմից մեծամասնության ճնշման ու շահագործման վերացում, սոցիալիստական հասարակական կազմակերպության հաստատում։

Հնչակյաններն իրենց հայտարարում էին սոցիալիստ և մարքսիստ։ Անտարակույս, սոցիալիստական և մարքսիստական գաղափարները որոշակի ազդեցություն են ունեցել հնչակյանների վրա։ Հնչակյաններից ոմանք մոտիկ կապեր են ունեցել Գ. Վ. Պլեխանովի և նրա «Աշխատանքի ազատագրության խմբակի» անդամների հետ։ Նրանք թարգմանել ու հրատարակել են մարքսիստական գրականություն, հայ իրականության մեջ առաջին անգամ մարքսիստական գաղափարներ տարածել։

Սակայն հնչակյան կուսակցության համար բնորոշը սոցիալիզմը և մարքսիզմը չէր։ Նրանց համար գլխավորը հայկական հարցի լուծումն էր, Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ Պատահական չէ, որ իրենց գլխավոր ուժերը և պրակտիկ գործունեությունը հնչակյանները կենտրոնացրել էին Արևմտյան Հայաստանում։ «Հեղափոխական-ապստամբական գործունեության ասպարեզն է Թուրքաց Հայաստանը»—ասված է նրանց ծրագրում։ «Պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում, գործի դնելով ժողովրդային ապստամբությունը»[9]։

---

8 «Հնչակ», 1888, № 11—12։

9 Նույն տեղում։

1880—1890-ական թվականներին Հայաստանում և հայկական գաղթ-օջախներում հնչակյանները ստեղծեցին իրենց կազմակերպությունները, Սուլթանական բռնակալության դեմ մղված պայքարում նրանք մեծ ճիգեր գործադրեցին և շատ զոհեր տվեցին, բայց ցանկալի արդյունքի չհասան։ Նրանք մեկուսացած, անկախ պայքար էին մղում այնպիսի բարդ և անբարենպաստ իրադրության պայմաններում, երբ հայ ժողովրդի և մյուս ճնշված ժողովուրդների համատեղ պայքարը միայն կարող էր ցանկալի արդյունքի հասցնել։ Նրանք հույսեր էին կապում մեծ տերությունների հետ, որոնք խաբում և նենդորեն հայկական հարցն օգտագործում էին իրենց շահերի համար։

Կյանքը շատ շուտով հնչակյաններին կանգնեցրեց մեծ դժվարությունների առաջ. նրանց շարքերում ներքին տարաձայնություններ ու պառակտումներ առաջացան։ 1896 թվականին անջատվեցին վերակազմյալ հնչակյանները։ Ներկուսակցական և միջկուսակցական (հնչակյանների ու դաշնակցականների) պայքարը անսովոր չափեր ընդունեց և մեծ վնասներ պատճառեց հայ ժողովրդին

Հնչակյաններն իրենց համարել և այժմ էլ համարում են մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Դա, իհարկե, իրականության չի համապատասխանում։ Մարքսիզմը պրոլետարիատի գաղափարախոսությունն է։ Հնչակյաններն հեռու էին կանգնած պրոլետարիատից։ Բանվոր դասակարգի ազատագրության, նրա քաղաքական-դասակարգային պայքարի հարցերը հնչակյաններին քիչ էին հետաքրքրում։

Հնչակյան կուսակցությունն իրականում եղել է մանրբուրժուական, ազգային-ազատագրական կուսակցություն։ Մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կուսակցության բնորոշ գծերից մեկը ինտերնացիոնալիզմն է։ Հնչակյանները ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Կովկասում գործում էին ազգային և ոչ թե ինտերնացիոնալ սկզբունքով։ Հայ իրականության մեջ մարքսիզմի, գիտական սոցիալիզմի գաղափարների կրողը և կենսագործողը հանդիսացել է ոչ թե հնչակյան, այլ կոմունիստական կուսակցությունը։

1890 թ. Թիֆլիսում ձևավորվում է դաշնակցություն կուսակցությունը։ Նրա հիմնադիրներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ռոստոմը (Ստ. Զորյան), Խաչատուր Մալումյանը և ուրիշներ։ Դաշնակցությունն հանդես եկավ հայ բուրժուազիայի զարգացման, ազգային-ազատագրական շարժումների աշխուժացման, սոցիալական ներհակությունների ու դասակարգային պայքարի սրման պայմաններում։

Արմենականների ու հնչակյանների նման, դաշնակցության պարագլուխները հանդես եկան ազգային-ազատագրության դրոշով։ Նրանց գաղափարական և պրակտիկ գործունեության հիմքում ընկած էր ազգային հարցը, Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայկական հարցի լուծման գաղափարը։

Պատահական չէ, որ 1890 թ. դաշնակցականներն ու հնչակյանները փորձեցին միավորվել, միացյալ կուսակցություն ստեղծել, հրատարակեցին իրենց մանիֆեստը, որտեղ կոչ էին անում բոլոր հայերին՝ երիտասարդներին, ծերերին, կանանց, հոգևորականներին, հարուստներին միանալ՝ հանուն «Թուրքաց Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատության»։

Հնչակյանների ու դաշնակցականների միավորման փորձերը հաջողություն չունեցան։ Նրանք ոչ միայն ընդհանուր լեզու չգտան և չկարողացան միասնական ճակատ ստեղծել ընդհանուր թշնամու դեմ, այլև հաճախ խիստ թշնամական դիրք բռնեցին միմյանց նկատմամբ, պառակտեցին նաև ժողովրդին, թուլացրին նրա ուժերը։

XIX դարի 90-ական թվականներին դաշնակցականներն իրենց դրեթե ամբողջ գործունեությունը կենտրոնացրին Արևմտյան Հայաստանում, իրենց գրեթե բոլոր ուժերը նվիրեցին հայկական հարցին։ Նրանք գաղտնի կազմակերպություններ ստեղծեցին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մի շարք վայրերում՝ ազատագրական գաղափարներ տարածելու, զինված ելույթներ նախապատրաստելու համար։ 1890 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Սարգիս Կուկունյանի արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան, 1896 թ. օգոստոսին՝ Օտոմանյան բանկի գրավում, 1897 թ. օգոստոսին՝ մի քանի հարյուր ֆիդայիների Խանասորի արշավանքը և այլն։

Ինչպես հնչակյանների, այնպես էլ դաշնակցականների հայդուկային գործողությունները, որքան էլ դրանք խիզախ ու համարձակ, անձնուրաց լինեին, շոշափելի արդյունք չտվեցին։ Հայ հայրենասերների թափած արյունը չէր բուժում կենդանի մնացածների վերքերը, չէր թեթևացնում կապարի ծանրությամբ ժողովրդին ճնշող օսմանյան բռնակալության լուծը։

Դաշնակցականների բռնած ուղին, հայ ժողովրդի ազատագրության ճիշտ ուղի չէր։ Նրանք իրենց կուսակցությունը կոչում էին «հայ հեղափոխական դաշնակցություն», բայց իրականում շատ հեռու էին իսկական հեղափոխական լինելուց։ Նրանք խոսում էին ամբողջ ազգի անունից, բայց իրականում պաշտպանում էին բուրժուազիայի շահերը։ Իրավացի է Ստ. Շահումյանը, երբ ասում է. «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «Դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին»[10]։

Դաշնակցությունն հետագայում ապրեց իր էվոլյուցիան. նրա բուրժուական-նացիոնալիստական էությունը ավելի ակնբախ դարձավ XX դարում, բանվորա-գյուղացիական հեղափոխական շարժումների վերելքի շրջանում։

XIX դարի 80—90-ական թվականներին, բանվոր դասակարգի կազմավորման և բանվորական շարժման հետ միասին, հայ իրականության մեջ հանդես է գալիս մարքսիզմը՝ միակ հետևողական հեղափոխական ուսմունքը։ Մարքսիստական գաղափարները հայ պարբերական մամուլում որոշ արտահայտություն են գտել տակավին 1860—1870-ական թվականներին՝ Ստ. Ոսկանի «Արևելք» և «Արևմուտք» թերթերում, Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ»-ում, «Մշակ»-ում և այլուր։

1880-ական թվականներից սկսվում են մարքսիստական գրականության հայերեն թարգմանության փորձերը։ 1887 թ. առաջին հայ մարքսիստներից մեկը՝ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմիդ) ժենևում ֆրանսերենից (ռուսերենի հետ համեմատելով) թարգմանում է «Կոմունիստական մանիֆեստը»-ը և ուղարկում Մ. Փորթուգալյանի «Արմենիա»-ին տպագրելու համար։ «Կոմունիստական մանիֆեստ»-ի այդ առաջին հայերեն թարգմանությունը չի տպա-

10 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, 1955, Երևան, էջ 185։

գրվում։ Գ. Ղարաջյանը ուսանողական տարիներին ծնևում կապեր ուներ Գ. Պլեխանովի, Վ. Զասուլիչի և ուրիշ մարքսիստների հետ, գտնվում էր նրանց գաղափարական ազդեցության տակ։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջաբանում Ֆ. Էնգելսը գրում է. «որ 1887 թվականին Կ. Պոլսում փորձել են տպագրել «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը, բայց հրատարակիչը չի համաձայնվել Կ. Մարքսի անունով տպագրել։ Այս թարգմանության հետ կապված հարցերը մինչև այժմ էլ մնում են չպարզաբանված։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի երրորդ հայերեն թարգմանությունը 1894 թ. Շտուտգարդում գերմաներենից կատարում է կովկասահայ ուսանող Հովսեփ Աթաբեկյանցը։ Նա անձնական կապեր ուներ Կ. Կաուցկու, Պարվուսի, Կ. Յետկինի և ուրիշների հետ, քաջ ծանոթ էր մարքսիստական գրականությանը։ Մինչ այդ, Մ. Հովհաննիսյանի հետ, նա թարգմանել էր Ֆ.. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությունը, որը տպագրվել էր 1894 թվականին Ժնևում։ «Կոմունիստական մանիֆեստ»-ի Հ. Աթաբեկյանցի թարգմանությունը նույնպես մնում է անտիպ։

1894 թ. Աթենքում հրատարակվող հնչակյան «Գաղափար» հանդեսում տպագրվում է «Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջին և երկրորդ գլուխները։ Թարգմանությունը ֆրանսերենից կատարել էին Մարո և Ավետիս Նազարբեկյանները։ Նախատեսված էր Մանիֆեստն առանձին գրքով հրատարակել հայերեն, բայց չհաջողվեց։ «Կոմունիստական մանիֆեստ»-ը հայերեն առաջին անգամ լրիվ հրատարակվեց 1904 թվականին՝ Ստ. Շահումյանի և Մ. Մանուչարյանի թարգմանությամբ։

«Կոմունիստական մանիֆեստ»-ի և մարքսիստական այլ աշխատությունների հայերեն հրատարակությունները առաջին լուրջ քայլերն էին հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման ուղղությամբ։ Մարքսիզմի առաջին տարածողները Եվրոպայում կրթություն ստացած, եվրոպական լեզուներ իմացող հայ առաջավոր երիտասարդներն էին, հայ ժողովրդի սոցիալական ու ազգային-ազատագրության գործին ու գաղափարին նվիրված մարտիկները։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման գաղափարական, պրոպագանդիստական առաջին քայլերիս շուտով հաջորդեցին գործնական, կազմակերպական աշխատանքներ։ Ռուսաստանից Անդրկովկաս աքսորված ռուս մարքսիստների և Ռուսաստանում կրթություն ստացած հայ հեղափոխականների ջանքերով ոչ միայն լայն ծավալ ստացավ մարքսիզմի պրոպագանդան, այլև ձևավորվեցին առաջին մարքսիստական խմբակները։ Մարքսիզմի տարածումը Արևելյան Հայաստանում անխզելիորեն կապվեց Անդրկովկասի և Ռուսաստանի բանվորական շարժման և մարքսիստական խմբակների գործունեության հետ։ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող և ռուսական հեղափոխական շարժման հետ կապված հայերի մեջ մարքսիզմը զարգացման պարարտ հող գտավ. հայ ժողովրդի հեղափոխական շարժումն այստեղ միահյուսվեց համառուսական հեղափոխական շարժման հետ։

Տարբեր էր իրերի դրությունը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտահայերի մոտ։ Թուրքիան ծայր աստիճան հետամնաց ագրարային երկիր էր. այնտեղ չկար կազմակերպված, առաջավոր պրոլետարիատ, բանվորական շարժում, չկային հեղափոխական, մարքսիստական կազմակերպու-

թյուններ։ Թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանում նույնպես չկար բանվոր դասակարգ և բանվորական շարժում։ Նման խիստ աննպաստ պայմաններում, բնական է, մարքսիզմը չէր կարող Արևմտյան Հայաստանում տարածվել, ինչպես այդ տեղի ունեցավ Արևելյան Հայաստանում։

Արևելահայ առաջին աչքի ընկնող մարքսիստներից էր Իսահակ Լալայանցը, մեծ Լենինի ուսանողական տարիների գաղափարակից ընկերն ու մտերիմ բարեկամը։ Առաջին հայ մարքսիստներից էին նաև Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Արշակ Զուրաբյանը և ուրիշներ։ Այս գործիչների անվան հետ է կապված մարքս-լենինյան գաղափարների տարածման և մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակների ու կազմակերպությունների ստեղծման պատմությունը։

Հայաստանում և Անդրկովկասում մարքսիզմի տարածման ուղղությամբ, անտարակույս, դրական որոշ աշխատանք են կատարել նաև 1892 թ. Թիֆլիսում հիմնված «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ն և 1898 թ. կազմակերպված Թիֆլիսի հայ բանվորների միությունը։

Ասոցիացիան կազմված էր բանվորներից, արհեստավորներից և մտավորականներից, մեծ մասը 17—20 տարեկան երիտասարդներ էին։ Նրա հիմնադիրներից ու ղեկավարներից էին Աշ. Խումարյանը, Ա. Խաժակյանը, Ս. Խանոյանը, Ս. Տեր-Ստեփանյանը, Պ. Մնացականյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշներ։ Ասոցիացիան ուներ իր գաղտնի տպարանը, որտեղ 1893—1894 թթ. տպագրվում էր «Ազատ Հայաստան», իսկ 1894—1895 թվականներին՝ «Կռիվ» անլեգալ թերթերը։

Ասոցիացիան մարքսիստական, սոցիալիստական գաղափարներ էր տարածում հայ բանվորների ու աշխատավորական մյուս խավերի մեջ, նրանց դասակարգային պայքարի կոչում շահագործողների դեմ։ Ասոցիացիայի գործունեության մեջ լայն տեղ էր գրավում նաև հայկական հարցը, Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը։ Նրանց նպատակն էր՝ հեղափոխական պայքարի միջոցով տապալել բռնապետական կարգերը և Հայաստանում ստեղծել ժողովրդական, դեմոկրատական կարգեր։

1894—1895 թթ. նրանք փորձեցին իրենց ճյուղերը տարածել Արևելյան և Արևմտյան Հայաստանում, բայց հաջողություն չունեցան։ 1895 թ. ցարական ոստիկանությունը հայտնաբերեց և ջախջախեց հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան։ Կազմակերպության անդամների մի մասը հետագայում մտավ հնչակյան կուսակցության, իսկ մյուս մասը (Ա. Խումարյան, Ս. Խանոյան, Ս. Մարտիկյան և ուրիշներ)՝ ՌՍԴԲԿ շարքերը։

Մարքսիստական, հեղափոխական ավելի կայուն դիրքերի վրա էր գտնվում Թիֆլիսի հայ բանվորների խմբակը։ Այդ խմբակի հիմնադիրներից էին առաջավոր բանվորներ Մելիք Մելիքյանը (Դեդուշկա), Հայկ Փիլոսյանը (Ադամյան), Աստատուր Կախոյանը (բանվոր Խեչո), սոցիալ-դեմոկրատ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեղ) և ուրիշներ։

1900—1901 թթ. խմբակն հրատարակում էր անլեգալ, ձեռագիր «Բանվոր» թերթը, որի ճակատին դրված էր՝ «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»։ Խմբակի անդամները հեղափոխական աշխատանք էին կատարում Թիֆլիսի բանվորության մեջ, սերտ կապեր ունեին վրացական բանվորական խմբակների հետ, գործում էին ինտերնացիոնալ սկզբունքով։ Նրանք հայ բան-

վորներին կոչ էին անում առանց ազգի խտրության, միասնական պայքար մղել բուրժուազիայի և ցարիզմի դեմ։ XX դարը նրանք համարում էին սոցիալիզմի դար, բանվոր դասակարգի վերջնական ազատագրության ժամանակաշրջան։

Մխիթյունը քննադատում էր հնչակյաններին ու դաշնակցականներին, որոնք հայ բանվորներին ու աշխատավորներին շեղում էին հեղափոխական պայքարի ճանապարհից, մեկուսացնում իրենց դասակարգային եղբայրներից, ջլատում նրանց ուժերը։ 1901 թ. ցարական կառավարությունը հայտնաբերում ու ջախջախում է Թիֆլիսի հայ բանվորների խմբակը։ Նրա անդամներից ոմանք հետագայում դառնում են ականավոր հեղափոխական գործիչներ։

Արևելյան Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը հիմնվում է 1899 թ. Ջալալօղլիում (այժմ Ստեփանավան) Ստ. Շահումյանի ղեկավարությամբ։ Ստ. Շահումյանը կրթված մարքսիստ էր, հավատարիմ լենինյան, Նա Հայաստանի և Անդրկովկասի մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ճանաչված ղեկավարներից էր։ Նա խոշոր դեր է խաղացել Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբման, նրանց սոցիալական ու ազգային ազատագրության գործում։

XIX դարի երկրորդ կեսին մարքսիստական գաղափարները թափանցում են նաև հայկական գաղթօջախներում ապրող հայ աշխատավորության մեջ։ Առաջավոր երիտասարդներից շատերը կանգնում են մարքսիզմի դրոշի տակ, ակտիվ մասնակցություն ունենում տվյալ երկրի մարքսիստական հեղափոխական կազմակերպությունների աշխատանքներին։ Օրինակ, 1896 թ. Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում բուլղարացի ականավոր մարքսիստ Ս. Բլագոևի նախաձեռնությամբ հիմնվում է «Երիտասարդ հայ սոցիալիստների խմբակ», որը մարքսիստական գաղափարներ էր տարածում Պլովդիվի հայ բանվորների ու աշխատավորների մեջ։ Բուլղարահայ այբի ընկնող հեղափոխական գործիչներից էին Տիգրան Խմիյանը (Զիլո) և Ստեփան Շահբազյանը։

Մարքսիզմի տարածումը և մարքսիստական խմբակների ստեղծումը Հայաստանում արմատական բեկում առաջ բերին հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Հայ իրականության մեջ հանդես եկավ և իր լայն տարածումը գտավ հեղափոխական, մարքսիստական ուղղությունը։ Մարքսիզմ-լենինիզմը հեղաշրջիչ դեր կատարեց ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ հայ ժողովրդի կյանքում, լուսավորեց նրա ազատագրական պայքարի ուղին։

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսը հանդիսացավ հայ հասարակական-քաղաքական մտքի բուռն զարգացման մի շրջան։ Ժողովրդի մեջ առաջ եկած սոցիալ-դասակարգային հարաբերություններին համապատասխան ձևավորվեցին հասարակական մտքի մի շարք ուղղություններ։ Այդ ուղղություններից յուրաքանչյուրն արտահայտում էր հասարակական կոնկրետ խավի, դասակարգի գաղափարախոսությունը։ Միօրինակ ու միասնական չէր հասարակական կյանքը, միօրինակ ու միասնական չէր և չէր կարող լինել նաև հասարակական միտքը։

Դարի երկրորդ կեսին երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համապատասխան իր էվոլյուցիան ապրեց նաև հայ հասարակական միտքը։ Դա օրինաչափ, դիալեկտիկական մի պրոցես էր։ 1850—1860-ական թվականներին ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանում, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքները պայքարում էին

ֆեոդալական, ռեակցիոն գաղափարախոսության դեմ։ Այդ պայքարում բուրժուազիան պրոգրեսիվ դեր էր կատարում։ Հետագայում, բուրժուական կարգերի տիրապետության շրջանում, ինչպես դասակարգային, այնպես էլ հասարակական մտքի պայքարը կենտրոնացավ երկու գլխավոր ուղղությունների՝ բուրժուական և մարքսիստական ուղղությունների միջև։ Այս շրջանում բուրժուազիան արդեն դադարել էր պրոգրեսիվ դեր կատարելուց։

Պատմականորեն հայ մարքսիստները հանդիսացան հեղափոխական-դեմոկրատական և ազգային-դեմոկրատական կուլտուրայի ժառանգորդները, այն ամենաառաջավորի ու արժեքավորի, որ ստեղծվել էր հայ հասարակական մտքի զարգացման նախամարքսիստական էտապում։

Ընդհանուր գծերով, այսպիսին էր XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական մտքի հիմնական ուղղությունների զարգացման ընթացքը։